ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ՍԵՐԳԵՅ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղահրամանյան.

Ի պատասխան Ձեր՝ 23.09.2017թ. հ.9Ե/20 գրության, տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված առաջարկության իրականացման հնարավորության հարցը տեղում ուսումնասիրվել և քննարկվել է: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Պարոնյան փողոցի՝ Պարոնյան-Զորափի փողոցների խաչմերուկին նախորդող՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կանգառասրահը հնարավոր է տեղափոխել առավելագույնը 7 մ-ով՝ այն մոտեցնելով կանգառանշանին և տեղակայելով հանդիպակաց կանգառի սրահի անմիջապես դիմացը: Պարոնյան փողոցի՝ Պարոնյան-Զորափի փողոցների խաչմերուկին նախորդող՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կանգառասրահի տեղափոխման աշխատանքներն ավարտված են:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ